ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա « 19 » հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 2832-Վ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Գարիկ Արշալույսի Հակոբյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 31954/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Գարիկ Արշալույսի Հակոբյանի (Հասցե՝ Տավուշ, Դիլիջան, Կալինինի փող., 288Ա-4, ՀՎՀՀ՝ 71020256, ՀԾՀ՝ 3712910355) չկատարված հարկային պարտավորությունը 16.06.2021թ. դրությամբ կազմել է 102.913 դրամ, որից հարկ՝ 88.050 դրամ, տույժ՝ 14.863 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 30.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի ներկայացրել:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն Գարիկ Արշալույսի Հակոբյանի կողմից կատարվել են՝

1. 02. 08. 2019թ. իրականացվել է 30. 01.2019թ. ձեռքբերված BMW 316 I մոդելի 1996թ. արտադրության 102 ձիաուժ հզորությամբ, որի պայմանագրային արժեքը կազմել է 200.000 դրամ,

2. 15. 08. 2019թ. իրականացվել է 15. 08. 2019թ. ձեռքբերված HONDA ELYSION 2.4 մոդելի 2006թ. արտադրության 160 ձիաուժ հզորությամբ, որի պայմանագրային արժեքը կազմել է 0 դրամ,

3. 09. 10. 2019թ. իրականացվել է 09. 10. 2019թ. ձեռքբերված HONDA ELYSION 2.4 մոդելի 2006թ. արտադրության 165 ձիաուժ հզորությամբ, որի պայմանագրային արժեքը կազմել է 500.000 դրամ,

4. 22. 11. 2019թ. իրականացվել է 22. 11. 2019թ. ձեռքբերված HONDA ELYSION 2.4 մոդելի 2006թ. արտադրության 160 ձիաուժ հզորությամբ, որի պայմանագրային արժեքը կազմել է 800.000 դրամ, տրանսպորտային միջոցների օտարման գործարքներ,

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա.մինչև 29.06.2019 թ-ի գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում հարկային տարվա ընթացքում երկրորդ կամ ավելի թվով ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենաների (առաջին, երկրորդ կամ ավելի թվով) և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի են ունեցել նույն հարկային տարվա ընթացքում:

բ.29.06.2019 թ-ի գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150 –րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից:

Ֆիզիկական անձ Գարիկ Արշալույսի Հակոբյանի կողմից ավտոմեքենայի օտարումից եկամտային հարկը չի հաշվարկվել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ N300-Ն հրամանի N3 հավելվածի:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 16.06.2021թ. դրությամբ կազմել է 102.913 դրամ, որից հարկ՝ 88.050 դրամ, տույժ՝ 14.863 դրամ, որն առաջացել է 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398 հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ֆիզիկական անձ Գարիկ Արշալույսի Հակոբյանից գանձել **102.913** դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

16.06.2021թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

	Հարկի և այլ	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվար	Ընդամենը		Հաշվի համարը

Հ/Հ	պարտադիր վճարի տեսակը	առաջացման ամսաթիվ	գումար	Հաշվարկված տույժ	կվածտուգանք		Վճարման ուղղությունը	
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2020թ	88.050	14.863	-	102.913	պետական բյուջե	90000800 0490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն, ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման
ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Վլադիմիր Ավետիսյան,
հեռ. 010-30-91-91 /91-48/: